Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 23.12.2022 թվականի «2023 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 298-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2023 թվականի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերի փոփոխությունը պայմանավորված է մի շարք ծրագրերի իրագործմամբ և համայնքում ծագած որոշակի խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Համայնքի խոշորացմամբ և խնդիրների մեծ ծավալով պայմանավորված բյուջեի որոշակի ծախսային հոդվածներում առկա միջոցները չեն բավարարում մինչև տարեվերջ վճարելու առաջացած ծախսերը, ուստի անհրաժեշտություն է առաջացել վարչական մասի ծախսերն ավելացնել՝ կապի ծառայությունների մասով 1500,0 հազար դրամ, հատուկ նպատակային նյութերի մասով՝ 1000,0 հազար դրամ, տրանսպորտային ծառայությունների մասով՝ 8000,0 հազար դրամ, համայնքում գործող բուժամբուլատորիաներին օժանդակություն ցուցաբերելու համար 1800,0 հազար դրամ: Վերոնշյալ ծախսերը ծածկելու համար՝ ընդհանուր 12300,0 հազար դրամ նվազեցումը կկատարվի օրենսդիր և գործադիր մարմինների պարգևատրում հոդվածից:

Բյուջեի ֆոնդային մասի փոփոխությունը պայմանավորված է հետևյալ խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ: Համայնքապետարանին պատկանող ծառայողական ավտոմեքենան վթարվել է և ԱՊՊԱ գործակալությունը որպես համայնքի գույքին պատճառված վնաս համայնքապետարանին է վճարել փոխհատուցման գումար: Ընդհանուր 2114,0 հազար դրամ գումարն անհրաժեշտ է ներառել բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում, ծախսային մասում այն ուղղելով տրանսպորտային միջոցների պահպանման և հիմնանորոգման հոդվածին:

Համայնքապետարանի 5-րդ հարկի վերանորոգումը մոտենում է ավարտին, ուստի անհրաժեշտ է ձեռք բերել ցանցային համակարգ՝ 7414,8 հազար դրամ, օդորակիչներ՝ 4263,0 հազար դրամ, համակարգիչներ և տպիչներ՝ 3210,0 հազար դրամ:

Համայնքում ծագած խնդիրների արագ և օպերատիվ արձագանքման համար անհրաժեշտ է ձեռք բերել թվով 2 ծառայողական ավտոմեքենա, որոնց համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 10236,0 հազար դրամ:

Ռանչպար գյուղի թվով 12 արտեզյան հորերի վերանորոգման համար անհրաժեշտ է ձեռք բերել նախագծանախահաշվային աշխատանքներ: Նշված ծառայությունը ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է 4 գնման ընթացակարգ 600,0 հազար դրամ արժեքով, որոնցից 3-ը հայտարարվել է չկայացած, ոչ մի հայտ չներկայացնելու հիմքով: Հետագայում հիմք ընդունելով պատասխանատու

ստորաբաժանման զեկուցագիրը, գնման գին է սահմանվել 2000,0 հազար դրամ, որից հետո միայն ընթացակարգը կայացել է և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ կնքվել է պայմանագիր: Ելնելով վերոնշյալից անհրաժեշտ է բյուջեի համապատասխան տողի միջոցներն ավելացնել 1400,0 հազար դրամով:

2023 թվականի բյուջեով նախատեսված Մասիս քաղաքի թիվ 4 մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2024 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, ուստի անհրաժեշտություն է առաջացել նշված աշխատանքի համար բյուջեում առկա 149726,5 հազար դրամը վերաբաշխել ներկայումս համայնքում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող այլ աշխատանքներին: Մասնավորապես՝

- Մասիս համայնքում ոռոգման համակարգերի կառուցման և նորոգման աշխատանքների համար՝ 100209,4 հազար դրամ
- Մասիս համայնքում լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների համար՝ 49517,1 հազար դրամ

Համայնքի այգիները, բազմաբնակարան շենքերի բակերը կահավորելու նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել թվով 50 նստարան, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 6500,0 հազար դրամ:

Մասիս համայնքի Սայաթ Նովա գյուղում կառուցված մշակույթի տունը գազաֆիկացված չէ և չունի ջեռուցման համակարգ: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է ձեռք բերել գազաֆիկացման և ջեռուցման համակարգի անցկացման փորձաքննություն անցած նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթ, որի համար բյուջեում պետք է նախատեսել 1100,0 հազար դրամ:

Մի շարք ծրագրերի իրականացման համար 2022թ. ձեռք բերված նախագծանախահաշվային փաթեթներով կատարվել են գնման գործընթացներ, որոնց արդյունքում կնքված պայմանագրերով աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել ընդհանուր 8504,19 հազար դրամ, որից՝

- Մասիս համայնքի Արբաթ բնակավայրի երաժշտական դպրոցի գազաֆիկացման աշխատանքների համար 2872,95 հազար դրամ
- Մասիս համայնքի Դաշտավան գյուղի մանկապարտեզի տարածքի բարեկարգման և ցանկապատման աշխատանքների համար՝ 5631,24 հազար դրամ:

Ստորև ներկայացվում է բյուջեի փոփոխության վերաբերյալ տեղեկանքը:

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերում եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի ծախսեր /հազար դրամներով/	Ֆոնդային մասի եկամուտներ /հազար դրամներով/	Ֆոնդային մասի ծախսեր /հազար դրամներով/
				Եկամուտներ				
1				Համայնքի գույքին պատճառված վնասի փոխհատուցումից մուտք			2114,0	
				Ծախսեր				
2	01	1	1	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Պարգևատրում	4112	-12300,0		
3				**Կապի ծառայություններ.**Փոստային ծառայություններ	4214	1500,0		
4				**Տրանսպորտային սարքավորումներ.** Տրանսպորտային միջոցների պահպանում և հիմնանորոգում	5121			2114,0
5				**Վարչական սարքավորումներ.** Օդորակիչներ, համակարգիչներ, տպիչ սարքեր	5122			7473,0
6				**Այլ սարք, սարքավորումների ձեռք բերում.** Ցանցային համակարգի ձեռք բերում	5129			7414,8
7	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /ուղևորափոխադրման ծառայություն/	4239	8000,0		
8				**Հատուկ նպատակային նյութեր.** Ծաղկեպսակների ձեռք բերում	4269	1000,0		
9				**Տրանսպորտային սարքավորումներ.** Ծառայողական ավտոմեքենաների ձեռք բերում	5121			10236,0
10				**Վարչական սարքավորումներ**	5122			-42627,99
11	04	2	4	**Ոռոգում.** Մասիս համայնքում ոռոգման համակարգերի կառուցում և կապիտալ նորոգում	5113			100209,4
12				**Նախագծանախահաշվային աշխատանքներ.** Ռանչպար գյուղի թվով 12 արտեզյան հորերի վերանորոգման	5134			1400,0
13	04	3	2	**Նավթամթերք և բնական գազ.**Արբաթ բնակավայրի երաժշտական դպրոցի	5112			2872,95

				գազաֆիկացման աշխատանքներ				
14	06	4	1	**Արտաքին լուսավորություն.** Մասիս համայնքի փողոցների լուսավորության ցանցի կառուցում	**5112**			49517,1
15	07	6	1	**Առողջապահություն.** Նվիրատվություն	**4819**	1800,0		
16	08	1	1	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Նստարանների ձեռք բերում	**5122**			6500,0
17	08	2	3	**Նախագծանախահաշվային աշխատանքներ.** Սայաթ Նովա գյուղի մշակույթի տան գազաֆիկացման և ջեռուցման համակարգի անցկացման	**5134**			1000,0
18				փորձաքննություն	**5134**			100,0
19	09	1	1	**Նախադպրոցական կրթություն.** Դաշտավան գյուղի մանկապարտեզի տարածքի բարեկարգման և ցանկապատման աշխատանքներ	**5113**			5631,24
20				Թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգում	**5113**			-149726,5
						0,0	***0,0***	***0,0***

Փոփոխությունների արդյունքում ֆոնդային մասի եկամուտները և ծախսերը կավելանան 2 114 000 դրամով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ